



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՐԴ

ք. Երևան

29.01.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/03

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ի կողմից 29.12.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից նյութերը, պարզեց հետևյալը.

1. «ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 29.12.2017թ. ներկայացրել է բողոք, որը կազմված է եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ:

Խորհուրդը՝ հիմք ընդունելով Օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները, վերադարձրել է «ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ի կողմից 29.12.2017թ. ներկայացրած բողոքը՝ արձանագրված անհամապատասխանությունները երկու աշխատանքային օրվա ընթացքում շտկելու և Խորհուրդ ներկայացնելու համար:

Ընկերությունը 10.01.2018թ. Խորհրդին է ներկայացրել բողոքի շտկված տարբերակը, որով հայտնել է հետևյալը.

«Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

«Մոնթե Մեքլոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը (այսուհետ՝ պատվիրատու) իր կայք էջում ՀՀ Կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի թիվ 390-Ն որոշմամբ հաստատված կարգով հրապարակել է իր կողմից 2018 թվականին գնվելիք աշխատանքների և ծառայությունների գնումների պլանը:

Պատվիրատուն իր կարիքների համար թիվ «ՄՄԱՌՎ-ՀԲՄԾՁԲ-8/2» հրատապ բաց մրցույթի ծածկագրով հայտարարել է մրցույթ (այսուհետ՝ մրցույթ):

«ՄՄԱՌՎ-ՀԲՄԾՁԲ-8/2» հրատապ բաց մրցույթի ծածկագրով գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ գնահատող հանձնաժողով) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն հրապարակել է «ՄՄԱՌՎ-ՀԲՄԾՁԲ-8/2» հրատապ բաց մրցույթի ծածկագրով հրատապ բաց մրցույթ կազմակերպելու մասին հայտարարությունը (այսուհետ՝ հայտարարություն):

Գնահատող հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 1 որոշմամբ հաստատվել է «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կարիքների համար հայտարարված «ՄՄԱՌՎ-ՀԲՄԾՁԲ-8/2» հրատապ բաց մրցույթի ծածկագրով հրավերը (այսուհետ՝ հրավեր):

«ԷԳՆԱՌՕ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ բողոքաբեր) հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը և մասնակցել է մրցույթին:

Մրցույթի արդյունքում գնահատող հանձնաժողովը 21.12.2017թ. կազմել է թիվ 2 արձանագրությունը, որով արձանագրել է, որ բողոքաբերի կողմից ներկայացված հայտի ապահովումը ներկայացված է սխալ: Ինչի արդյունքում հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ մերժել է բողոքաբերի կողմից ներկայացված հայտը:

Գնահատող հանձնաժողովը մրցույթում առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչել «Պոռ ԷՄ ԷՍ» ՍՊ ընկերությանը և հայտարարել է այդ ընկերության հետ պայմանագիր կնքելու որոշման մասին:

Բողոքի իրավական հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն գործի փաստական հանգամանքների, բողոքաբերի կողմից ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված հրավերի պայմանների ու հետագայում կազմված արձանագրության համադրված վերլուծության լույսի ներքո գտնում ենք, որ «ԷԳՆԱՌՕ» ՍՊ ընկերության հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը չի բխում գործի փաստերից և հակասում է ՀՀ գործող օրենսդրության պահանջներին հետևյալ պատճառաբանությամբ.

Բողոքաբերն, ինչպես արդեն նշել են սույն բողոքի «Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող» բաժնում հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը և մասնակցել է մրցույթին

1 չափաբաժնով մաքրման և սանիտարահիգիենիկ ծառայությունների մատուցման մասով: Նշված մրցույթի շրջանակներում ի թիվս մրցույթի հրավերով պահանջված մնացած փաստաթղթերի բողոքաբերի կողմից ներկայացվել է նաև հայտի ապահովում՝ տուժանքի մասին համաձայնագրի տեսքով:

Մրցույթի հրավերի 7-րդ՝ «Հայտի ապահովումը» բաժնի 7.1. կետի համաձայն՝ հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում, նշված ձևերով հայտի ապահովումը դիտարկված է որպես ընդհանուր կանոն: Նույն բաժնի 7.2. կետը սահմանում է նշված ընդհանուր կանոնից բացառություններ այն դեպքերի համար, երբ գնման ընթացակարգը կազմակերպվում է չափաբաժիններով:

Մեր պարագայում «ՄՄԱՌՎ-ՀԲՄԾՁԲ-8/2» հրատապ բաց մրցույթի ծածկագրով աշխատանքների և ծառայությունների գնման ընթացակարգը կազմակերպվել է չափաբաժիններով:

Բողոքաբերը մրցույթին մասնակցել է 1 չափաբաժնով մաքրման և սանիտարահիգիենիկ ծառայությունների մատուցման մասով:

Մրցույթի հրավերի 7.2 կետի համաձայն՝ եթե ըստ չափաբաժինների ներկայացրած գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է 70 մլն. ՀՀ դրամ, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա ապահովումը կարող է ներկայացվել միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Բողոքաբերի գնային առաջարկն առանց ավելացված արժեքի հարկի կազմել է 58.332.500 ՀՀ դրամ, իսկ ԱԱՀ-ով 69.999.000 ՀՀ դրամ: Այսինքն, չի գերազանցել 70.000.000 ՀՀ դրամ գումարը: Հետևաբար, բողոքաբերը որպես հայտի ապահովում ստորագրել է հրավերին կից պատվիրատուի կողմից հաստատված ձևով «Տուժանքի մասին» համաձայնագիրը:

Գնահատող հանձնաժողովն իր 21.12.2017թ. թիվ 2 արձանագրության 3-րդ՝ «Ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին» բաժնում նշել է. «Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բացառությամբ..... «Էգնառ» ՍՊԸ-ի Հայտի ապահովման /Հայտի ապահովումը սխալ է ներկայացված/»: Գնահատող հանձնաժողովը որպես հայտի մերժման հիմք վկայակոչել է ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը, որի համաձայն հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և

(կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Սակայն, հանձնաժողովը չի պարզաբանել, թե բողոքաբերի կողմից ներկայացված հայտի ապահովումն իր մեջ ինչ սխալ է պարունակում, այն էլ այն պայմաններում, որ տուժանքի մասին համաձայնագրի ձևը, որպես հայտի ապահովում հաստատված եղել հենց պատվիրատուի կողմից և կցված է եղել հրավերին:

Գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության ուսումնասիրությունը, մասնավորապես արձանագրության 4-րդ բաժինը, որտեղ աղյուսակի տեսքով նշված են ընկերությունները և նրանց կողմից առաջարկված գները ցույց են տալիս, որ գնահատող հանձնաժողովը որպես մրցույթի նախահաշվային արժեք նշել է 93.000.000 ՀՀ դրամ գումարը:

Այս կետում կցանկանալի անդրադառնալ նաև պատվիրատուի կայք էջում ՀՀ Կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի թիվ 390-Ն որոշմամբ հաստատված կարգով հրապարակված «2018 թվականի գնումների պլան փոփոխություն լրացում» վերտառությամբ փաստաթղթին և համեմատել այն գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության հետ:

Նախևառաջ պետք է նշեմ, որ պատվիրատուի կայք էջում հրապարակված 2018 թվականի գնումների պլանը, բացարձակապես անընթեռնելի է, և ոչ թե բողոքաբերի տալիչ սարքերի թերությունների պատճառով, այլ այդ փաստաթուղթը կայք էջում հրապարակվել է հենց այդ տեսքով: Դրանում բողոքաբերի աշխատակիցները համոզվեցին, երբ փաստաթուղթը փորձեցին արտատպել այլ ընկերություններին և անհատներին պատկանող տալիչ սարքերով: Տպավորություն է ստեղծվում, որ փաստաթուղթը հրապարակվել է թերություններով մրցույթի մասնակիցներին թյուրիմացության մեջ գցելու նպատակով:

Երկրորդ, նշված փաստաթղթի համեմատությունը գնահատող հանձնաժողովի արձանագրության 4-րդ բաժնի հետ ցույց է տալիս, որ 93.000.000 ՀՀ դրամ գումարը, որը գնահատող հանձնաժողովն իր թիվ 2 արձանագրությամբ որակել է որպես նախահաշվային արժեք պատվիրատուի «2018 թվականի գնումների պլան» փաստաթղթում որակված չէ որպես նախահաշվային արժեք: Այսինքն, 93.000.000 ՀՀ դրամը որպես մրցույթի նախահաշվային արժեք որակելն ըստ էության հանդիսացել է գնահատող հանձնաժողովի նախաձեռնությունն, ինչի իրավունքը հանձնաժողովը չունի և հանձնաժողովի գործողություններն այս տեսանկյունից ոչ միայն չի բխում գնումների մասին օրենսդրության պահանջներից, այլ նաև ուղղակիորեն հակասում է դրանց: Նշվածի հիմնավորումը ներկայացվում է հաջորդիվ կետերում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 24-րդ կետի համաձայն՝ գնման գին՝ ապրանքը, աշխատանքը, ծառայությունը ձեռք բերելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշվարկված նախահաշվային գինը:

Նշված իրավանորմի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը նույնականացրել է «գնման գին» և «նախահաշվային գին» հասկացությունները և սահմանել է, որ նախահաշվային գինը հաշվարկվում է ՀՀ Կառավարության կողմից սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության Կառավարությունն իր 2017 թվականի ապրիլի 13-ի թիվ 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի լրացման, հաստատման և հրապարակման» կարգով (որոշման 3-րդ հավելված) հաստատել է նախահաշվային գնի հաշվարկման կարգը: Այսինքն, սահմանել է նախահաշվային գնի հաշվարկման մեթոդիկան:

Շեռաբար, գնահատող հանձնաժողովը չուներ տվյալ մրցույթի նախահաշվային գինը ինքնուրույն որոշելու և սահմանելու որևէ իրավասություն:

Ավելին, Հայաստանի Հանրապետության Կառավարությունն իր 2017 թվականի ապրիլի 13-ի թիվ 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի լրացման, հաստատման և հրապարակման» կարգի ուսումնասիրությունից և վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ գնահատող հանձնաժողովի կողմից որպես նախահաշվային գին որակված 93.000.000 ՀՀ դրամը չի կարող գնահատվել և որակվել որպես նախահաշվային կամ գնման գին:

Նշված փաստական հանգամանքների և իրավական նորմերի համադրումը և վերլուծությունը ցույց է տալիս, որ գնահատող հանձնաժողովը ոչ միայն դուրս է եկել իր իրավասությունների շրջանակներից՝ ինքնուրույն սահմանելով մրցույթի նախահաշվային գինն, այլ նաև 93.000.000 ՀՀ դրամը սահմանելով որպես նախահաշվային գին խախտել է «Գնումների մասին օրենքի» և ՀՀ կառավարության որոշման պահանջներն, ինչի արդյունքում բողոքաբերի կողմից ներկայացված հայտի ապահովումը որակել է որպես սխալ ներկայացված և արդյունքում մերժել է ներկայացված հայտն այն պայմաններում, երբ բողոքաբերի կողմից ներկայացված հայտը ոչ միայն համապատասխանել է հրավերի պայմաններին, այլ նաև գնային առաջրկի առումով եղել է մրցույթին մասնակցած մյուս մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներից ամենացածրը:

Վերոհիշյալի հաշվառմամբ և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ կետով՝ բողոքաբերը հորհրդին խնդրել է՝

1. Դադարեցնել պայմանագիր կնքելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը և արգելել պատվիրատուին «Պոռ ԷՄ ԷՍ» ՍՊ ընկերության հետ կնքել պայմանագիր:

2. Դադարեցնել «Պոռ ԷՄ ԷՍ» ՍՊ ընկերությանն առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ գնահատող հանձնաժողովի որոշումը:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում կայացած նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Արմեն Ղազարյանը:

2. «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 16.01.2018թ. էլեկտրոնային գրությամբ «ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ի կողմից 29.12.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Բողոքաբերի կողմից 2017թ. դեկտեմբերի 29-ին ՀՀ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքը առ այն, որ ՄՄԱՌՎ-ՀԲՄԾՁԲ-8/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը դուրս է եկել իր իրավասությունների շրջանակից և ինքնուրույն սահմանել է մրցույթի նախահաշվային գին, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության որոշման պահանջները, ինչի արդյունքում բողոքաբերի կողմից ներկայացված հայտի ապահովումը որակել է որպես սխալ ներկայացված և արդյունքում մերժել է ներկայացված հայտն այն պայմաններում, երբ բողոքաբերի կողմից ներկայացված հայտը ոչ միայն համապատասխանելի է հրավերի պայմաններին, այլ նաև գնային առաջարկի առումով եղել է մրցույթին մասնակցած մյուս մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներից ամենացածրը, ամբողջությամբ անհիմն է՝ հետևյալ պատճառաբանություններով.

1. Բողոքաբերը իր բողոքում նշել է, որ մասնակցել է Պատվիրատուի կարիքների համար անհրաժեշտ մաքրման և սանիտարահիգիենիկ ծառայությունների ձեռքբերման նպատակով ՄՄԱՌՎ-ՀԲՄԾՁԲ-8/2 ծածկագրով գնման ընթացակարգին և ներկայացրել է հայտի ապահովում՝ համաձայն ընթացակարգի հրավերի 7-րդ բաժնի 7.1 և 7.2 կետերի, իսկ իր կողմից ներկայացված գնային առաջարկը չի գերազանցել 70.0 մլն ՀՀ դրամը, ինչպես նաև նշել է, թե մրցույթի գնահատող հանձնաժողովի 21.12.2017թ. 2-րդ արձանագրության վերաբերյալ չկան պարզաբանումներ:

Տվյալ դեպքում, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի մայիսի 24-ի N 244-Ա հրամանի՝ «Բաց մրցույթով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող գնումների

բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևեր»-ի 7-րդ բաժնի 7.1 կետի 2-րդ և 3-րդ պարբերություններում հստակ նշված է, թե որ դեպքում է հրավերը մշակվելիս սահմանվում հայտի ապահովում կամ կանխիկ փող, իսկ որ դեպքում՝ բանկային երաշխիք կամ կանխիկ փող: Նշեմ նաև, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի՝ 9-րդ ենթակետով, ևս սահմանվում է, թե երբ և որ դեպքում է ներկայացվում հայտի ապահովում կամ կանխիկ փող, իսկ որ դեպքում՝ բանկային երաշխիք կամ կանխիկ փող, մասնավորապես՝

- Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, եթե ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը:

- Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, եթե ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 9-րդ ենթակետը և հրապարակված Մրցույթի հրավերի 7-րդ բաժնի 7.1 կետի 2-րդ պարբերության պահանջը, բողոքաբերի կողմից ներկայացված հայտի ապահովումը սխալ է, նշեմ նաև, որ մրցույթի գնահատող հանձնաժողովի 21.12.2017թ. 2-րդ արձանագրության պարզաբանման վերաբերյալ գրավոր և բանավոր հարցում չի ներկայացվել հանձնաժողովին, ինչի արդյունքում գնահատող հանձնաժողովի պարզաբանման վերաբերյալ խոսք լինել անգամ չի կարող:

2. Բողոքաբերը իր կողմից ներկայացված բողոքի 4-րդ կետում նշել է, որ Պատվիրատուի կայքէջում հրապարակված 2018թ. գնումների պլանը բացարձակապես անընթեռնելի է և դա արված է միտումնավոր՝ մասնակիցներին թյուրիմածության մեջ գցելու նպատակով: Ինչպես նաև նույն կետում նշել է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովն իր թիվ 2 արձանագրության 4-րդ բաժնում, որպես նախահաշվային արժեք որակված 93,000,000 ՀՀ դրամ գումարը, պատվիրատուի «2018 թվականի գնումների պլան» փաստաթղթում որակված չէ որպես նախահաշվային արժեք, ինչից ենթադրել է, թե 93,000,000 ՀՀ դրամը հանդիսանում է գնահատող հանձնաժողովի նախաձեռնությունը:

Տվյալ դեպքում բողոքաբերի օգտագործած «Պատվիրատուի կայքէջում հրապարակված 2018 թվականի գնումների պլանը» բառակապակցությունը սխալ է կիրառված, քանի որ

համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում(...), և ՀՀ կառավարության 13.04.2017թ. թիվ 390-Ն որոշման 9-րդ կետի՝ գնումների պլանը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով հրապարակում է տեղեկագրում, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ տեղեկագիրը օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է: Ստացվում է, որ Պատվիրատուի կողմից հրապարակված 2018 թ. գնումների պլանը հրապարակված է գործող իրավական նորմերի համաձայն՝ www.procurement.am ինտերնետային կայքում, ինչից և օգտվել են բոլոր մասնակիցները, այդ թվում՝ բողոքաբերը:

Անդրադառնալով բողոքաբերի այն պնդմանը, թե հրապարակված գնումների պլանը անընթեռնելի է, նշեմ, որ 01.02.2017թ. «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Գ. Սարգսյանի կողմից հաստատված և www.procurement.am կայքում հրապարակված գնումների պլանը լուսապատճենված է բնօրինակից, ինչի մասին վկայում է տեղեկագրում այս պահին փաստաթղթի առկայությունը: Տվյալ դեպքում կարծում եմ, որ անընթեռնելիությունը հնարավոր է ստուգել և համոզվել, որ դրա վերաբերյալ պնդումը չի համապատասխանում իրականությանը:

3. Ինչ վերաբերում է բողոքում նշված այն պնդմանը թե՛ ընթացակարգի գնահատող հանձնաժողովն իր թիվ 2 արձանագրության 4-րդ բաժնում, որպես նախահաշվային արժեք որակված 93,000,000 ՀՀ դրամ գումարը, Պատվիրատուի «2018 թվականի գնումների պլան» փաստաթղթում որակված չէ որպես նախահաշվային արժեք, ինչից բողոքաբերը ենթադրել է, թե 93,000,000 ՀՀ դրամը հանդիսանում է գնահատող հանձնաժողովի նախաձեռնությունը, նշենք, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.201թ. թիվ 526-Ն որոշման 4-րդ գլխի 17-րդ կետի՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է: Այստեղից կարելի է ենթադրել, որ գնման պահանջը ծագում է տեղեկագրում գնումների պլանի հրապարակման պահից, ինչից հետո նույն որոշման 20-րդ

կետի համաձայն գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի ղեկավարի կողմից գրավոր սահմանվում է պատասխանատու ստորաբաժանում, որի կողմից էլ գնումների համակարգողին է ներկայացնում գնման հայտ, որտեղ մանրամասն նշվում է ձեռք բերվող գնման առարկայի տեխնիկական բնութագիրը, նախահաշվային արժեքը, ձեռքբերման ժամկետները և այլն, ինչից հետո գնումների համակարգողը երեք աշխատանքային օրվա ընթացքում կազմում և գրավոր Պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին հրամանի նախագիծը:

Վերոգրյալից հստակ երևում է, որ նախահաշվային արժեքը սահմանվում է ոչ թե գնահատող հանձնաժողովի, այլ պատասխանատու ստորաբաժանման կողմից, այսինքն, բողոքաբերի այն պնդմանը, թե նախահաշվային արժեք որոշելը դա գնահատողի հանձնաժողովի նախաձեռնությունն է, չի համապատասխանում իրականությանը և չի բխում իրավական նորմի պահանջներից:

4. Բողոքաբերն իր կողմից ներկայացված բողոքում 5-րդ կետում նշել է, որ ընթացկարգի նախահաշվային գինը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի թիվ 390-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի, սակայն նույն կարգի 3-րդ հավելվածը վերաբերվում է գնումների պլանի լրացմանը, հաստատմանը և հրապարակմանը, և նախահաշվային արժեքի հաշվարկման վերաբերյալ ոչ մի նշում չի պարունակում, ուստի սա ևս չի համապատասխանում իրականությանը:

Վերոշարադրյալից պարզ է դառնում, որ «ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը ամբողջությամբ անհիմն է, հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքին, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմանը, ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի թիվ 390-Ն որոշմանը և ենթակա է մերժման:

Բողոքարկման խորհրդին ցանկանում ենք տեղեկացնել, որ 11.01.2018 թ. ժամը 15:22-ին տեղեկագրում հրապարակվել է ՄՄԱՌՎ-ՀԲՄԾՁԲ-8/2 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագրերի մասին հայտարարություն, իսկ ԳԲԽ-ԷՍ-2018/03 ծածկագրով բողոքի վերաբերյալ ծանուցումը Պատվիրատուի կողմից ստացվել է կնքված պայմանագրերի մասին հայտարարության հրապարակումից հետո:

Խնդրում ենք մերժել «ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ի կողմից 29.12.2017 թ. բերված բողոքը ակնհայտ անհիմն լինելու պատճառով:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Աշոտ Պետրոսյանը, Հռիփսիմե Նավասարդյանը և Սոնա Նավասարդյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2018/03 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն ուսումնասիրել է «ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ի կողմից 29.12.2017թ. Խորհրդին ներկայացված համանման բողոքը և կից փաստաթղթերը, «ՄՄԱՌՎ-ՀԲՄԾՁԲ-8/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՄՄԱՌՎ-ՀԲՄԾՁԲ-8/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 21.12.2017թ. ժամը 10:00-ի հայտերի բացման նիստի N 2 արձանագրությունը, «Պոռ ԷՍ ԷՍ» և «ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերի պատճենները, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կարիքների համար մաքրման և սանիտարահիգիենիկ ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՄՄԱՌՎ-ՀԲՄԾՁԲ-8/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ են ներկայացրել «Պոռ ԷՍ ԷՍ» և «ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ները:

Հանձնաժողովը՝ 21.12.2017թ. ժամը 10:00-ի հայտերի բացման նիստի N 2 արձանագրության՝

- 3-րդ կետով արձանագրել է, որ Ընթացակարգին «ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված հայտի ապահովումը սխալ է ներկայացված,

- 4-րդ կետով արձանագրել է, որ Ընթացակարգի նախահաշվային արժեքը կազմել է 93,000,000 ՀՀ դրամ,

- 5-րդ կետով որոշել է «ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել,

- 6-րդ կետով՝ որոշել է «Պոռ ԷՍ ԷՍ» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

«ՄՄԱՌՎ-ՀԲՄԾՁԲ-8/2» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքներով Պատվիրատուն տեղեկագրում հրապարակել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որի համաձայն՝ «Պոռ ԷՍ ԷՍ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընթացակարգի ընտրված մասնակից:

Բողոքի քննության նպատակով 23.01.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ «ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդեց Բողոքն ամբողջությամբ և հայտնեց, որ «ՄՄԱՌՎ-ՀԲՄԾՁԲ-8/2» ծածկագրով գնման ընթացակարգը կամակերպվել է

չափաբաժիններով, ուստի և ղեկավարվելով Ընթացակարգի հրավերի 7.2 կետի պահանջով, համաձայն որի՝ եթե ըստ չափաբաժինների ներկայացրած գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է 70 մլն. ՀՀ դրամը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա ապահովումը կարող է ներկայացվել միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի տեսքով, Ընկերությունը հայտի ապահովումը ներկայացրել է տուժանքի մասին համաձայնագրի տեսքով (Ընկերության գնային առաջարկը ԱԱՀ-ով կազմել է 69.999.000 ՀՀ դրամ, այսինքն, չի գերազանցել Հրավերի 7.2 կետով սահմանված շեմը):

Ընկերության ներկայացուցիչը նշեց նաև, որ պատվիրատուի կայքէջում հրապարակված 2018թ. գնումների պլանը գրեթե անընթեռնելի է, ինչը հնարավորություն չի տվել մասնակցին ծանոթանալու նշված փաստաթղթի բովանդակությանը: Ընդ որում, նշված հանգամանքը բողոքաբերի կողմից որակվեց որպես թյուրիմացության մեջ գցելու դիտավորություն:

Ընկերության ներկայացուցչի մեկ այլ դիտարկման համաձայն՝ Հանձնաժողովի N 2 արձանագրության 4-րդ կետով որպես Ընթացակարգի նախահաշվային արժեք նշված 93,000,000 ՀՀ դրամը պատվիրատուի 2018թ. գնումների պլանում որակված չէ որպես «նախահաշվային արժեք», ինչից բողոքաբերը եզրակացրել է, որ 93,000,000 ՀՀ դրամը Ընթացակարգի «նախահաշվային արժեք» որակելը հանդիսացել է գնահատող հանձնաժողովի ինքնուրույն նախաձեռնությունը, որպիսի լիազորությունը վերջինիս գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ տրված չէ:

Ամփոփելով վերը շարադրված հանգամանքները՝ բողոքաբերը հայտնեց, որ «ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին Հանձնաժողովի որոշումը չի բխում գործի փաստերից և հակասում է ՀՀ գործող օրենսդրության պահանջներին:

Պատվիրատուի ներկայացուցիչն առարկեց «ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ի այն պնդմանը, առ այն, որ «ՄՄԱՌՎ-ՀԲՄԾԶԲ-8/2» ծածկագրով գնման ընթացակարգը կամակերպվել է չափաբաժիններով, և հայտնեց, որ Հրավերով նախատեսված՝ ձեռքբերվող ծառայությունը կազմակերպված չէ առանձին չափաբաժիններով: Մատնանշելով վերը նշված հանգամանքը, ինչպես նաև այն, որ Պատվիրատուի 2018թ. գնումների պլանի համաձայն՝ որպես ձեռք բերվող ծառայությունների նախահաշվային արժեք (գնման գին) նախատեսվել է 93,000,000 ՀՀ դրամ գումարը, Պատվիրատուի ներկայացուցիչը պնդեց, որ Հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժելու որոշումը լիովին համապատասխանել է Ընթացակարգի Հրավերի 7.1 և 7.2 կետերով սահմանված պահանջներին:

Անդրադառնալով բողոքաբերի այն պնդմանը, թե Պատվիրատուի կողմից հրապարակված 2018թ. գնումների պլանն անընթեռնելի է, Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց, որ Պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատված և www.procurement.am կայքում հրապարակված գնումների պլանը լուսապատճենված է բնօրինակ փաստաթղթից, ինչի մասին վկայում է տեղեկագրում ներկայումս առկա փաստաթուղթը, իսկ վերջինիս անընթեռնելիության մասին բողոքաբերի պնդումը, ըստ Պատվիրատուի ներկայացուցչի, չի համապատասխանում իրականությանը:

Պատվիրատուի ներկայացուցիչը հակադարձեց բողոքաբերի նաև այն պնդմանը, թե ընթացակարգի գնահատող հանձնաժողովն իր թիվ 2 արձանագրությամբ որպես նախահաշվային արժեք որակված 93,000,000 ՀՀ դրամ գումարը, Պատվիրատուի 2018թ. գնումների պլանում որակված չէ որպես նախահաշվային արժեք, հետևաբար, 93,000,000 ՀՀ դրամը գումարը չի հանդիսանում Ընթացակարգի նախահաշվային արժեք և հանդիսանում է գնահատող հանձնաժողովի նախաձեռնությունը, նշելով, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախահաշվային արժեքը սահմանվում է ոչ թե գնահատող հանձնաժողովի, այլ Ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման կողմից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 2-րդ հոդվածի համաձայն՝ գնման գինը ապրանքը, աշխատանքը, ծառայությունը ձեռք բերելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշվարկված նախահաշվային գինն է:

- 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

• 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

ՀՀ կառավարության 13.04.2017թ. N390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի լրացման, հաստատման և հրապարակման» կարգի 2-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ 7-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդհանուր գումարը՝ հազ. դրամով:

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի մայիսի 24-ի N 244-Ա հրամանով հաստատված՝ հրատապ բաց մրցույթով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերի՝

• 7.1 կետի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: (Ընդ որում, եթե նույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա նույն նախադասությունը հրավերից հանվում է):

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: (Ընդ որում, եթե նույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա նույն նախադասությունը հրավերից հանվում է):

• 7.2 7.2 կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում՝ մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավելի չափաբաժինների համար, ապա հայտի ապահովումը կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում, դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե ըստ չափաբաժինների ներկայացված գնային առաջարկների

հանրագումարը գերազանցում է 70 մլն. ՀՀ դրամը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա ապահովումը կարող է ներկայացվել միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: (Նույն կետը հրավերից հանվում է, եթե գնման ընթացակարգը չի կազմակերպվում չափաբաժիններով):

«ՄՄԱՌՎ-ՀԲՄԾՁԲ-8/2» ծածկագրով գնման ընթացակարգի Հրավերի՝

• 7.1 կետի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

• 7.2 կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում՝ մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավելի չափաբաժինների համար, ապա հայտի ապահովումը կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում, դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե ըստ չափաբաժինների ներկայացված գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է 70 մլն. ՀՀ դրամը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա ապահովումը կարող է ներկայացվել միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Խորհուրդն արձանագրում է, որ «ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում հայտի ապահովումը ներկայացվել է տուժանքի մասին համաձայնության ձևով:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «ՄՄԱՌՎ-ՀԲՄԾՁԲ-8/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի նախահաշվային արժեքը կազմել է 93,000,000 ՀՀ դրամ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ն Ընթացակարգի շրջանակներում հայտի ապահովումը ներկայացվելով տուժանքի մասին համաձայնության ձևով՝ խախտել է Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետով և Հրավերի 7.1 կետով սահմանված պահանջները:

Խորհուրդը գտնում է նաև, որ Հանձնաժողովը՝ «ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխանող գնահատելով՝ գործել է իրավաչափ:

Ինչ վերաբերում է Բողում նշված այն իրավական և փաստական հանգամանքներին, որ Ընկերությունը «ՄՄԱՌՎ-ՀԲՄԾՁԲ-8/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի ապահովումը տուժանքի մասին համաձայնության ձևով ներկայացրել է հիմք ընդունելով Հրավերի 7.2 կետով սահմանված պահանջները, անհիմն է, քանի որ մրցույթը չի կազմակերպվել առանձին չափաբաժիններով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ի կողմից 29.12.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման

խորհրդի անդամ՝



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ